

ԲԻԻՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՄՐՆԵՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒ- ԹԻԻՆՆԵՐ ՀԱՅՍՏԱՆՈՒՄ,

ՊՈՑՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՆՆԵՐ

VI 4 IV ԴԱՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ,

Ներքոգրեալ պատմական հատուածները կամ աւելի ճիշտն ասած՝ վաւերագիր մատեաններից հանած պատմական քաղուածները, որ այսօր թարգմանաբար առաջ եմ բերում Վեդալի էջերում, ներկայիցս տասնեակ տարիներ առաջ լոյս տեսան Փարիզում Ֆրանսերէն լեզուով՝ լատիներէն բնագրների (textes) հետ միասին:

Արդարեւ 1875 թ. յուլիս ամսին Փարիզի հայ ուսանողների անդրանիկներից մէկը — համալսարանի իրաւաբանական բաժնի շրջանաւարտ (licencié en droit) ¹⁾ Կ. Պօլսեցի մեր ծանօթ-բարեկամ պ. Պետրոս Շաշեանը ²⁾, ցանկանալով ստանալ իրաւաբան-աշխատանքի ուսումնական տիտղոսը, լիջեալ համալսարանի նոյն իրաւաբանական բաժնին ներկայացրեց իւր շարագրած գիտնական աշխատութիւնը հետեւեալ վերնագրով՝ «Ամուսնութեան յատկութեան ու սահմանող պայմանների մասին», ³⁾ որի մէկ օրինակը հէնց նոյն 1875 թուականին սիրալիք մի ձօնով նուիրեց ինձ՝ որպէս «յուշարար բարեկամութեան»:

¹⁾ Бандидатъ правъ.

²⁾ Յետոյ դօքտօր իրաւաբանութեան և թիւրքիայի մայրաքաղաքի անուանի հալ փաստաբաններից մին:

³⁾ Du Caractère et des Conditions constitutives du mariage, thèse pour le doctorat présentée et soutenue le 27 Juillet 1875 par P. Chachian, Paris.

Այս բնաբան—գրուածը (thèse), որ բաւականին ստուար քառածալ մի գրքով է՝ բաղկացած մօտ 170 մաքուր տպած քառասնատող լի երեսներից, իրաւագիտական-պատմական հմտակից մի ուսումնասիրութիւն է «Ամուսնութեան յատկութեան ու սահմանող պայմանների մասին» ընդհանրապէս՝ սկսած հռոմէական օրէնքներից մինչև մեր օրերը, ուր հեղինակը աւելի քննադատաբար պատմում և մանրամասնաբար վերլուծելով ներկայացնում է ընթերցողին մարդուս երկրորդ անգամ աշխարհ մտնելու բոլոր պարագաները շատ տեսակէտներից:

Իւր այս գրուածի վերջում պ. Շաշեանը առաջ է բերում, որպէս առանձին յաւելում, մի քանի քաղուածներ այն մայր մատեաններից ⁴⁾, որ ձեռքին է ունեցել ինքը իւր բնաբան-գրուածի նիւթը ուսումնասիրելիս:

«Յարմար առթից օգտուելով ⁵⁾, ասում է նա նոյն յաւելուածի սկզբում, հրատարակում եմ, որպէս հայ զաւակ, զուգահայեաց թարգմանութեամբ լատիներէնից ֆրանսերէն հետեւեալ բնագիրները (textes), որ հետաքրքիր անգղեկութիւններ են տալիս Հայաստանի սովորութիւնների մասին: Այս լատիներէն բնագիրները հեռու լինելով իրանց պարունակութեամբ ներկայ գրուածիս գլխաւոր առարկայից՝ կը շահագրգռեն անկասկած իմ հայրենակիցներից մի քանիսին: Հէնց այս լուսովն է, որ ընդօրինակելով այս բնագիրները առաջ եմ բերում այստեղ:

Իւր այս բոլոր քաղուած «բնագրներին», որ իւր «թէզի» վերջին տասնուչորս յատուկ մանրատիպ երեսներն են թռնում, պ. Շաշեանը հետեւեալ վերնագիրն է տալիս՝ «Մանրամասներ ⁶⁾ Հայաստանի քաղաքացիա-

⁴⁾ ա, Corpus Juris de Kriegel, édition de Leipzig— «Մատենի իրաւագիտութեան» կրէզէլի, հրատ. Լէյպցիխի, բ. Code Théodosien de Haenel, «Յրէնսդիրք Թէոդոսեան» Հէնէլի, հրատ. Լէյպցիխի:

⁵⁾ Ասինքն իւր թէզը—բնաբան-գրուածը—տպագրելու առթից:

⁶⁾ Աւելի ճիշտ կըլինէր, որ ասէր «մի քանի մանրա-

կան, վարչական և դատաստանական կազմակերպութեանց մասին կայսր Յուստինիանոս առաջինի ժամանակ (ուրեմն VI-րդ դար). թէև «ընազրներից» երկու վերջին «զբքերը», որ քաղուած են Թէոդոսեան Օրինագրքից, IV-րդ դարին են վերաբերում: Բայց ինչ և է, չորրորդ դարում հրատարակուած օրէնքները կամ օրէնքներ դարձած կարգադրութիւնները VI-րդ դարում ևս կարող էին նոյնպէս գործ դրուիլ և գործ էին դրուում, ինչպէս որ հրամայում է Յուստինիանոսը ասելով՝ «մեր անձամբ հրամայած և կամ մեր նախորդների ձեռքով պատուիրած կայսերական օրէնքները հայերի համար հաւասարապէս հասարակաց պիտի լինին» (եր. 131): Սակայն գլխաւորն այն է, որ պ. Շաշեանը չէ ասում, թէ հայոց աշխարհին վերաբերեալ իւր առաջ բերած այս քաղուածները այն մայր մատեաններից կամ օրէնսգրքերից ⁷⁾ լրիւ. ե՛ն արդեօք, և թէ չը կան արդեօք ուրիշ նոյնպիսի կամ այլ տեսակ հրաման-կարգադրութիւններ, յօդուածներ, օրէնքներ և այլն նոյն մատեանների մէջ, որ դարձեալ Հայաստանին և կամ առհասարակ հայոց վերաբերէին:

Վերոյիշեալ օրէնսգիրք մատեանները, (որպէս և շատ ուրիշ անհրաժեշտ հատորներ) որ համալսարանների գրադարաններում սովորական բան են, Թիֆլիսում քամբախտաբար անկարող եղաւ ձեռք բերել, որպէս զի համեմատելով պ. Շաշեանի հրատարակած «լատիններէն ընագրներին» հետ, ես էլ քաղէի դարձեալ նոյն մատեաններից հայերիս վերաբերեալ և այն հատուածները ևս, որոնց գուցէ նա աչքութող էր արած պատահամբ ⁸⁾, ինչպէս որ ես էլ մինչև այսօր, այն

մասները, որովհետեւ բացի իւր առաջ բերած այս «մանրամասներէ», անշուշտ ուրիշ մանրամասներ եւ կալին այն ժամանակ Հայաստանի թէ լուսկան և թէ միւս բաժնում նոյն կազմակերպութեանց վերաբերեալ, որոնց ինքը Յուստինիանոս կայսրը ևս, ինչպէս կըտեսնէ ընթերցողը, ակնարկում է այս ներքոգրեալ օրէնք դարձած իւր հրաման-կարգադրութիւնների մէջ:

⁷⁾ Տես ծանօթ. 4-րդ:

⁸⁾ Օրինակ՝ մինչդեռ «Թէոդոսական օրինագրոց մէջ, ինչպէս որ ասում է Հ. Յակոբոս Շաշեանը, կալ հրաման մը

պատահմամբ, մոռացել եմ խօսելու գրական հրապարակի վրայ մեր վաղեմի բարեկամի յիշեալ աշխատութեան մասին ընդհանրապէս ⁹⁾, որ թղթերիս մէջ է մնացել պահուած: Բայց ինչ և է, ուրիշ անգամի կամ այլ հմուտ անձանց թողնելով աւելի լրիւ քաղաւածներ տնել հայոցս մասին թէ նոյն և թէ նոյնանման վաւերագիր մատեաններից և ուսումնասիրել նոցա տուած նիւթը հայերին վերաբերեալ՝ անցնինք մենք հայերէն թարգմանելուն իւր գրած կարգով մեր իրաւաբան-դօքտօրի աշխատութեան վերջում առաջ բերած մեզ գրադեցնող յաւելուածի և, ինչպէս որ հանգամանքները կը ներեն, մեր կարողութեան չափ ծանօթութիւններով ևս բացատրենք այն, որ իւր չափով էլ շատ հետաքրքիր ու շահեկան նիւթ կտրող է մատակարարել հայ պատմական ուսումնասիրութեամբ գրադուող բանասէրներին և մասնաւորներին ¹⁰⁾: Բայց ահաւասիկ

Պատանդեալ իւր փոքր Ասիոյ կուսակալին, որ Արշակ Է Հայոց Արքային տրուին «երթեկեկութեան սուրհանդակներ» և այլն» (Ուսումնասիրութիւն Ազաթանդեղեալ գրոց, Վիէննա 1891, երես 148.), պ. Շաշեանի առաջ բերած նոյն Թէոդոսեան օրինագրքից քաղուածների մէջ, ինչպէս լետող կը տեսնենք, «երթեկեկութեան սուրհանդակներն» մասին ոչինչ լիշատակութիւն չը կար: Սակայն շարունակենք:

⁹⁾ Ասում եմ՝ աշխատութեան — այսինքն նորա բնաբան-գրուածի մասին ընդհանրապէս, որովհետեւ մասնաւորապէս պ. Շաշեանի վերջնական քննութեան և դօքտօրական տիտղոսին արժանանալու մասին իւր ժամանակին՝ 1875-ին լիշել և իմաց եմ տուել Փարիզից ինձ ապերախտ «Մշակին»:

¹⁰⁾ Չըմոռանամ լիշել, որ պ. Շաշեանի առաջ բերած այս ներքոգրեալ «բնագիրները» չը գիտեմ՝ երբ և իցէ թարգմանուած են արդեօք հայերէն թէ ոչ: Գոնէ արժանաւիշատակ է. Վ. Բաստամեանը «Մխիթար Գոշի Դատաստանագրքի» իւր քաղմանմուտ հրատարակութեան լառաշարանում լատնապիս տուած է Թէոդոսեան օրէնսգրքի մասին թէ՛ «մենք չունինք պատմական տեղեկութիւններ, որ այս օրէնսգիրքը իւր հրատարակելու ժամանակ կամ լետող երբ և իցէ թարգմանուած լինէր հայերէն կամ ամբողջապէս և կամ հատուածներով» և այլն (տես եր. 20 լիշեալ գրքի «լառաշարանութեան»): Իսկ զայնով Յուստինիանոսի օրէնքներից «քաղուածներին» դուցէ մասամբ թարգմանուած և մուծուած են հալ թարգմանական օրինագրքերի մէջ — օրինակ Նոր-Նախիջևանցոց և այլն — (տես

նախ մեր թարգմանելի նիւթի բովանդակութիւնը պ. Շաշեանի գրած կարգով՝

Մասն քաղաքացիական—1, Նովէլա (օրէնք) XXI. տիտոս (պրակ) VIII. Հայերին վերաբերեալ, որպէս զի նոքա հետեւին ամեն բանով հռոմէական օրէնքներին.—2, Հրովարտակ III-րդ—Յուստինիանոս Ա. կայսեր Հայոց մէջ եղած ժառանգութեանց վերաբերեալ: Մասն վարչական—3, Նովէլա XXXI. տիտոս X. Հայաստանի բաժանման մասին չորս պաշտօնեաների մէջէ: Մասն դատաստանական—4, Նովէլա XX. տիտոս VII. գլ. III. Կարգապահ-նուիրակներէ ծառայութեանց մասին. 5, Նովէլա VIII. տիտոս II. Ծանուցագիր պաշտօնեաների ռոճիկներին վերաբերեալ. այս բոլորը քաղուած են Corpus Juris-ից, իսկ Code Théodosien-ից (տես ծանօթ. 4 ըդ) առաջ են բերուած Հարկահանութեան հետեւեալ երկու «գիրքը»՝ 6, Գիրք XI. տիտոս I. Տարեկան տուրքերի և հարկերի մասին—օրէնք Կոստանդիանոս Մեծի, և վերջապէս 7, Գիրք XII. տիտոս VI.—Հրաման Վաղենտինիանոս, Թէոդոսիոս և Արկադիոս կայսրների հարկահաններին և գործակալ-վերակացուններին վերաբերեալ:

Ահա և մեր թարգմանութիւնը՝

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ¹¹⁾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ¹²⁾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ,

«Լումար» 1902 № 1. եր. 161) և որ համեմատական ուսումնասիրութիւնը միայն կարող է ցոյց տալ. Դժբախտաբար այստեղ՝ Թիֆլիսում, ուր այսպիսի գործով զբաղուող անձը պէտք է թափառէ և մուրալ մասնաւոր մարդկանց պակասաւոր իսկ գրադարաններից հաւաքելով իւր ուսումնասիրելի առարկայի նիւթը, գրեթէ անկարելի է զբաղուիլ այս տեսակ ուսումնասիրութեամբ, ձեռքի տակ չունենալով, ինչպէս վերև լինեցի, անհրաժեշտ նիւթը թէ այս և թէ միւս կէտերին վերաբերեալ և այլն:

¹¹⁾ Տես ծանօթ. 6-րդ:

¹²⁾ Հայաստանի լուսնական բաժնի մասին է ի հարկէ այստեղ խօսքը, որ ինչ կողմէ լինէր իւր ազդեցութիւնը պիտի ունենար քրիստոնեակ Հայաստանի պարսկական բաժնի վրայ, որովհետև լալտնի է պատմութիւնից, թէ ինչպէս ծովի ալիքների նման ասես տարուբերում էին հայոց մշտապա-

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ ՅՈՒՍԽԻՆԻԱՆՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍԵՐ-
ՃԱՄԱՆԱԿ՝¹³⁾

տան դաւառները երկու անհաշտ թշնամի տէրութեանց միջև՝
մէկ ձեռքից միւսը անցնելով նուաճամբ:

¹³⁾ Յուստինիանոս կալսեր ժամանակը լինելով՝ ուզում
եմ անցողակի կերպով մի խօսք ասել այստեղ ինձ աչքի ընկնող և
յիմ կարծիքով մի կարեւոր պատմական երեւոթի վրայ:— Յայտ-
նի է որ Պրոկոպիոս VI դարու լոյն պատմիչը ընդարձակօրէն
խօսելով իւր պատմութեան մէջ լինեալ «մեծ կալսեր» թագա-
ւորութեան մասին առհասարակ, մի քանի «գիրք» է նուե-
րում նորնպէս նորա մեծագործ «չինուածոց», որոնց մէջ առա-
ջին տեղը իրաւամբ գրաւում էր «Բիւղանդական ճարտարա-
պետութեան գլուխ դործոց» սուրբ Սօֆիա հռչակաւոր տա-
ճարը: Այս տաճարը նուիրում Աստուծոյ իմաստութեան
(սօֆիա նշանակ. իմաստութիւն), որ սկսուել էր կառուցուիլ
Բիւղանդիոնի նորաշէն գաղութում դեռ Կոստանդիանոս մեծի
թագաւորելու քսաներորդ տարին և որ այսպս նորա լաջորդ-
ներին—Արկադիոսի ու Թէոդոսի ժամանակներում—ալրուել և
կրկին անգամ վերանորոգուել էր՝ Յուստինիանոս առաջինը
հիմն ի վեր և մեծածոխ կերպով բոլորովին նոր կառուցանե-
լով, կամեցել էր որ արարչագործութիւնից ի վեր աշխարհիս
մէջ եղած բոլոր շէնքերից ամենահոյակապ լիշատակարանը
լինէր այն, որի պատերի իւրաքանչիւր աղիւսը «Աստուածա-
հաստատ» արձանագործութիւնն էր կրում և որ «Աստուծոյ
հրեշտակների օգնութեամբ աւարտուելով» բարձրացել, հան-
դիսացել էր որպէս շինուած—պարծանք համայն քրիստոնէու-
թեան հաւատի: (René Ménéard, Hist. des Beaux - Arts, Paris
1875, եր. 185 և հետեւալներ): Արդ՝ եթէ Մովսէս Խորենացու
մի քանի քննդատներին հետեւելով ընդունուի, որ մեր պատ-
մահալը VII և կամ VIII դարու մատենագիր—պատմիչ է՝
միթէ ուրեմն երբ սա այնպէս մանրամասն խօսելով Բիւղան-
դիոնի մէջ եղած «չինուածոց լուելումների, լարդարումների»
և ընդհանրապէս վերանորոգումների մասին, և լինելով Կ. Պո-
լսը վերանորոգող թագաւորների անուններ Աղէքսանդր Մա-
կեդոնացուց սկսած մինչև Կոստանդիանոս մեծը (Խոր. Գ. II.
Գլ. ձը.), միթէ ուրեմն, արում եմ, իւր համառօտաբան ո-
ճոյն իսկ անգամ, նոյն դարերի մեր միւս պատմագրների
պէս (օր. Պատմ. Սերէոսի ս. Պետերբ. 1879, եր. 19, 26,
167 և այլն) մի բառով գոնէ չէր ակնարկիլ իւր Պատմու-
թեան նոյն գլխում ալն դերադանց շինուածների և մանա-
ւանդ ս. Սօֆիա հռչակաւոր տաճարի կառուցմանը, որ իրա-
նից իբրև թէ մի դար կամ ակնի առաջ Յուստինիանոս մեծը
ձեռքով հիմնարկուելով շինուել, հռչակուել էր որպէս «Աս-

ՄԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

Նովելլա¹⁴⁾ (novella-օրէնք) XXI. Տիտլոս (պրակ)
VIII.

Հայերին վերաբերեալ, որպէս զի նոքա հետեւին
ամեն բանով հռոմէական օրէնքներին:

Կայսրն Յուստինիանոս¹⁵⁾ Հայաստանի մեծափառ
փոխ-հիւպատ (proconsul) Ակակիոսին¹⁶⁾:

Յ ա ո ա ջ ա ը ա ն .

Դիտաւորութիւն ունենալով որ Հայաստանը կա-
ռավարուի լաւ օրէնքներով, և որ այդ երկիրը չը դա-
նազանուի ոչնչով մեր պետութեան միւս մասերից՝
մենք տուինք դորան հռոմէական վարչութիւններ, ա-

տուածաշէն՝ լիշատակարան ամբողջ քրիստոնէական աշխար-
հի համար:

¹⁴⁾ Novellae են կոչուում նորնպէս և Յուստինիանոս կայ-
սեր ալն օրէնքները, որ կազմոււմ են չորրորդ և վերջին մա-
սը «Հռոմէական իրաւանց», որպէս և Թէոդոսեան օրէնսգրքի
լամբարդիւոց լեռով՝ Թէոդոս կայսեր և իւր լաջորդների հրա-
տարակած կայսերական օրէնքները (D. L. p. 760.)

¹⁵⁾ Յուստինիանոս Ա. (527—565) և իւր ժամանակակից
հայոց իշխանների լարաբերութեանց, պատերազմների, նուաճ-
մանց մասին և այլն՝ Հ. Չամչեանը Պրոկոպիոս և միւս լոյն
պատմիչներից առնելով՝ մանրամասնաբար խօսում է իւր պատ-
մութեան Վաղագս գործոց իշխանացն հայոց լաւուրս Յուս-
տինիանոսի կայսեր և միւս գլխներում (Պատմ. Չամչ. հ. բ.
եր. 240 գլ. լէ. և հետեւեալներ):

¹⁶⁾ Proconsul էր անուանոււմ հռոմա—բիւզանդական
ալն պաշտօնեան, որ consul-ի (հիւպատի) լատուկ իշխանու-
թեամբ կառավարում էր կայսրութեանը ստորադրեալ աշ-
խարհը և կամ դաւառը: Այս պաշտօնեաններից մէկն էր ա-
հա և «... Ակակիոս որ մտերիմն էր կայսեր... կարգեցաւ իշ-
խան Հայոց ալնր կողման (ի բարձր Հայս ի կողմանս կար-
նու), էր սա ալր ժանտ և անօրէն անագորոյն քան դամե-
նալն մարդ ըստ ասելոյ Պրոկոպիոսի. ընդարձակութիւն գրո-
եալ ալնու իշխանութեամբ՝ բազում չարիս գործեաց, և անո-
ղորմութեամբ ծանրացաւ ի վերայ հպատակաց իւրոց, և առ-
նայր հարկս մեծամեծս: Որում ոչ կարացեալ տանել Հայոց...
բարձին զնա ի կենաց» և այլն (Պատմ. Չամչ. նոյն գլ.): Եւ
իրաւ, երկար չէ տևում Ակակիոսի վարչութիւնը, ինչպէս որ
հետեւեալ «հրաման—կարգադրութիւններից» երևում է:

դատեցինք իւր հին բարքերից և ընտելացրինք հոռմէական բարքերին, հրամայելով որ բացի մեր օրէնսդրութիւնից ուրիշ օրէնսդրութիւն չունենայ այդ երկիրը ¹⁷⁾։ Բայց մենք մտածում ենք թէ հարկաւոր է սահմանել լատկորոշ մի օրէնք՝ բառնալու համար հետեւալ բարբարոս սովորութիւնը, որ պահպանել են հայերը։— Դոցա մէջ կանայք հրաժարեցրած են ստանալուց թէ իրանց ծնողների կամ նախահայրերի ժառանգութիւնները և թէ իրանց հարազատ և կամ համահայր եղբայրների ¹⁸⁾։ Ամուսնացնում են նոցա առանց օժիտի, և ապագայ ամուսինները գնում են նոցա ¹⁹⁾։ Այդ սովորութիւնը մինչև այսօր խստութեամբ

¹⁷⁾ Այս «Յառաջարանի» մինչև այս տողը միայն՝ լատիներէն բնագրով—պ. Շաշեանի քաղած լատիներէն բնագրից սակաւ ինչ տարբեր բառերով, առաջ է բերում պ. Նր. Շահաղիլը իւր «Նոր Նախիջ. Դատաստանագիրք» հետաքրքիր լոգոլածում։ («Լուսախ» 1902 № 1, երես 169)։

«Մենք տուինք և ալլն» ասելով՝ Յուստինիանոսը ակնարկում է անշուշտ դարերով Հայաստանին տիրող իւր նախորդներին ևս, որովհետեւ ինք կամ տաւր տարուալ ընթացքով՝ այսինքն իւր զայն բարձրանալուց (527) մինչև այս «կարգադրութեան» հրատարակումը (536) հայերը չէին կարող աչնալն չուտ չազատուելով իրանց հին բարքերից ընտելանալ հռոմէական բարքերին, մանաւանդ որ «բացի հռոմէական օրէնսդրութիւնից, ալլ ևս ուրիշ օրէնսդրութիւն չըպիտի ունենային նոքա»։

¹⁸⁾ Կանանց ժառանգական իրաւունքները ոչ միայն հալոց, ալլ և հռոմայեցւոց մէջ անդամ բաւականին սահմանափակ էին նոյն իսկ մինչև Յուստինիանոսի ժամանակ։ Սա եղած օրէնքների խմբագրումներ ու փոփոխութիւններ անելով և նոր իրաւունքներ սահմանելով՝ ասեա մի տեսակ լեզափոխիչ հանգիստցաւ հին կարգերի։ «Այս կալսրը, պսում է Մօնտէսքիւեօն, ժառանգութեանց վերաբերեալ հին իրաւունքների ամենաաւիտքը հետքն անդամ չըթողեց... և կամօնալով հետեիլ բնութեան կանոններին՝ խորշեց սա ալլ ամեն բանից, ինչ որ ինքը անուանում էր խառնաշփոթումներ հին իրաւագիտութեան, և ալլն» (Ses Montesquieu, De l'Esprit des lois, Paris 1874, p. 463.)։

¹⁹⁾ Աղջկանց օժիտ տալը ծնողների կողմից ինքը Յուստինիանոսն էլ դեռ իւր օրով նոր սահմանեց կալսրութեան մէջ, ուստի և զարմանալի չէր, որ նորա ժամանակ հայերը ևս ուրիշ ազգերի պէս իրանց աղջկանց օժիտ չէին տալիս հետը

պահպանել են հայերը, և դոքա միայնակ չեն այդ բանում. Այդ երևույթը սովորական է եղած ուրիշ ժողովրդների մէջ ևս, որոնք մի և նոյն կերպով անպատոււմ են բնութիւնը, անարգում են կանանց սեռը, որ կարծես թէ Աստուծոյ ստեղծուածը չը լինէր, որ ասես թէ մարդուս ծնն ագործութեանը ամենևին չը գործակցէր, և որ վերջապէս իբր թէ ստոր, արհամարհելի ու անարժան լինէր ամեն պատուի ²⁰⁾:

տանելու փեսայի տուն, այլ ընդհակառակը՝ ինքը փեսան էր օժիտ բերում «վարձանք» անունով: Այս բանին է ահա ակնարկում այս օրէնսդիր կալսրը ասելով թէ՝ «ապագայ ամուսինները դնում են իրանց կանանց»։ Հարցասէր ընթերցողին լինելով նոյնպէս «Кавказ. Вѣстн.» ամսագրի ներկայ 1902 թ. առաջին երկու համարներում ղեկողուած համեմատական ուսումնասիրութեան հետաքրքիր լողուածր—«Очерки по общному семейному праву армян» վերնագրով, ուր ի թիւս այլ և այլ տեղեկութիւնների հալ ընտանիքի սովորութեան իրաւունքների վրայ՝ այս մեր խօսածի մասին ևս տեղեկութիւններ կան, մենք քաղենք այստեղ պ. Շաշեանի Thèse-ից ևս նոյն հարցին վերաբերեալ բաղմաթիւ տողերից զոնէ հետեւեալը՝ — «Աղջիկ զնելը մարդկային սեռի ամուսնութեան դադարի արի առաջին ձևն է եղած Հին ժամանակների ամենակրթուած աղգերն անդամ անցել են այս շաւղով, և դերմանական, սկանդինավեան, կելտական և սլաւոն ցեղերի ըստ օրէնքների մէջ երևում են այս սովորութեան հետքերը... Հաւանական է որ Հայաստանի մէջ ևս նախնական ժամանակներում աղջիկ վաճառելու սովորութիւնը ծագայել է որպէս մի կապ ամուսնութեան հաստատման (Journal Asiat. ancienne ceremonies du mariage en Georgie 1831, t. 8. p. 108)... Միթէ չէ՞ կարելի ասել, որ հէնց արդի քաղաքակրթ աղբերը նոյնպէս այնքան էլ հեռու չեն զնայել ամուսնութեան գնման ու վաճառման վիճակից և այլն... Սակայն քրիստոնէութիւնը սրբազործելով ամուսնութիւնը՝ բոլորովին մոռացնել ոչնչացնել տուեց սորա նախնական պայմանի՝ այն է՝ զնելու ձևը... Տրօպիկոյի ասելով (Influence du Christianisme) քրիստոնէութիւնը ըմբռնեց ամուսնութեան փիլիսոփայութիւնը մի այնպիսի խորագիտութեամբ, որին ոչ մի այլ կրօնական վարդապետութիւն չէ կարող հասնել. (Ses Du Caractere et des Conditions du mariage պ. Շաշեանի թեզի 3. 4 միւս երեսներ)»:

²⁰⁾ Անհատատելի է թուում, թէ վեցերորդ դարում այս աստիճան արհամարհուած լինէր հալ կիւր. քրիստոնէական վարդապետութիւնը այնպէս բարձրացել էր պաշտարանի նո-

ԴՆՈՒՄ I.

Հետեւաբար ներկայիւս մենք հրամայում ենք, որ մեր պետութեան մէջ գործադրուող օրէնքները կանանց ժառանգական իրաւունքներին վերաբերեալ գործադրուին Հայաստանում, և որ այս նկատմամբ մէկ և միւս սեռի անձանց միջև զանազանութիւն ալ ևս չը լինի այդտեղ. մեր օրէնքներով սահմանած ձևի համաձայն՝ հայ կանայք կը ստանան ժառանգութիւն իրանց ծնողներից՝ այսինքն իրանց հօրից ու մօրից, պապերից կամ նախահայրերից և հաներից կամ մեծ-մայրերից վերել ծնունդների ճիւղաւորութեան կարգով անվերջ, իսկ վարէջ ծնունդների ճիւղաւորութեան կարգով—իւրանց զաւակներից և զսորերից, ինչ կերպով էլ սօքս աւանդեն իրանց ժառանգութիւնները նոցա: Այսպիսով հայերը մեր պետութեան օրէնսդրութիւնից տարբեր մի օրէնսդրութիւն ալ ևս չեն ունենալ, և եթէ դժբա մեր կայսրութեան մասն են կազմոււ, եթէ դժբա մեզ հպատակուած են, որպէս շատ ուրիշ ժողովուրդներ՝ վայելելով մեր բարերարութիւնները,—դոցա կանայք իբր եզակի զրկուածներ չեն մնալ մեր ողորմածութիւնից, և մեր բոլոր օրէնքները նոցա համար հաւասարապէս հասարակաց կը լինին, թէ այն օրէնքները,

րա դրութիւնը, որ մեր պատմագրներից շատերի—Յդիշէի, Խորենացու, Շնորհալու, Գոշի և այլոց վկայութեամբ, շատ բաներում և մանաւանդ բարոյապէս հաւասարուելով նա ալ մարդուն (Տես նոյնպէս «La Cité Antique» p. 464)՝ գերազանցել էր նոյնպէս իւր առաքինութեամբ և հալ ընտանիքի զաղափարը բարձր ու անարատ պահելով, ինքն էլ «իրաւունքների և ւզատութեան» տէր էր դարձել: Յուստինիանոսը իւր սաղառամտութեամբ՝ կարծես թէ չափազանցում է իւր մեղադրանքի մէջ: Առհասարակ խղճմտօրէն և անաչառ կերպով ուսումնասիրելու կարօտ մի կէտ է հալ կնոջ պատմական անցեալը, որ իւր բազմադարեան կեանքի ընթացքում զանազան հակառակ ազդեցութեանց ու փոփոխութեանց է ենթարկուել և որ ոմանք նորա ներկայ վիճակի ու կացութեան հետ համեմատելով՝ ասես կամաւոր եղբակացութիւնների են հասնում նորա անցեալի դրութեան մասին: Զօ չէ կարելի ասել, որ մեր անմահ պատմագիրները խօսելով իրանց ժամանակակից հալ կանանց մասին՝ միշտ բանաստեղծում են, մոռանալով բոլորովին իրականութիւնը և ալլն:

որ ընդունելով նախնիքներից պարունակում են մեր
ինստիտուցիոնալ և դիգեստա²¹⁾ օրենսդրությունի մէջ և
թէ մեր անձամբ հրամայած և կամ մեր նախորդների
ձեռքով պատուիրած կայսերական օրենքները:

Գլուխ II.

Հռոմէական օրենքները կանանց ժառանգական
իրաւունքներին վերաբերեալ թող ընդմիշտ գործադրուին
Հայաստանում՝ սկսեալ տասնուչորրորդ *ինդիկտիոնի*²²⁾
սկզբից, այսինքն այն ժամանակից, երբ ներկայս հրա-
մայում ենք, որովհետեւ վերելանել դէպի նախընթաց ժա-
մանակները և փոփոխել անցեալը՝ աւելի շփոթութիւն
կը լինէր, քան թէ օրենսդրութիւն: Ուստի և կրկնում
ենք, որ այսուհետեւ, և սկսած տասնուչորրորդ *ինդիկ-
տիոնից*, ժառանգութիւններ ստանալու եղանակը միա-
ձեւ լինի ամենքի համար՝ այսինքն մի և նոյնը լինի թէ
տղամարդկանց և թէ կանանց համար: Սակայն ազգա-
տոհմական կամ հայրենական և այլ ստացուածքների
արդէն ամբողջապէս կատարուած բաժանումները թող
պահպանուին նոյնութեամբ. — կանալք ոչ մի մասն չեն
ունենալ արդէն բաժանեալ գույքներից և կամ ստացուած
ժառանգութիւններից մինչև տասնուերեքերորդ *ինդիկ-*

²¹⁾ Institutiones էր կոչուում իրաւագիտութեան այն ժո-
ղովածուն, որ պարունակելով իւր մէջ հռոմէական իրաւանց
սկզբունքները, նշանակուած էր որպէս ձեռնարկ ուսանողնե-
րի համար, և որ ապա Յուստինիանոս կայսեր հրամանով Di-
gesta ժողովածուի պէս օրենքի զօրութիւն ստացաւ 533-ին:
Իսկ Digesta է անուանուում հռոմայեցւոց նշանաւոր իրաւա-
գէտների վճիռների այն ժողովածուն, որ յօրինուած դարձեալ
նոյն կայսեր հրամանով նոյն 533-ին՝ օրենք դարձաւ և կազ-
մեց Հռոմէական օրենքների՝ առաջին մասը: Նոյն ժամա-
նակներում թարգմանուելով լատարէն՝ կոչուեցաւ Pendectes:
(D. L. G. En, և Բ. Բ.)

²²⁾ Ինդիկտիոն է ասուում իւրաքանչիւր տասնու-
հինգ տարուաւ շրջանը, որ գործ է ածուում եկեղեցական օրա-
ցուցներում ևս: Երեք տեսակ ինդիկտիոն կար, որոնցից Կ.
Պոլսինը սկսում էր սեպտեմբ. 1-ին և կայսերականը սեպ-
տեմբ. 14-ին, երբ երկրի բերքը հաւաքուած լինելով՝ ժողո-
վուրդը դիւրաւ կարող էր վճարել հարկը և այլն: (Gr. En.
p. 846 և Ընդհ. Տոմարագ. վէճեռ. երես 156):

տիոնը բացառապէս, քանի որ նոցա վերաբերեալ հռոմէական օրէնսդրութեան գործադրելու սկիզբը տասնուչորրորդ ինդիկտիոնից պիտի սկսուի:

Վերջաբան.

Ձերդ բարձրութիւնը, որպէս և ձեզանից յետոյ եւ իող ձեր պաշտօն վարողները, կը հոգաք, որ յաւիտեան պահպանէք ներկայ օրէնքով հրամայուածիս կատարումը:

Արարեալ Վոստանդնուպօլսում ասլըիլի օրերի 15-ին Բէլիզարիոսի ²³⁾ հիւպատոութիւնից յետոյ (536 ին):

Հրովարտակ III-րդ Յուստինիանոս Ա. կայսեր Հայոց մէջ եղած ժառանգութեանց մասին ²⁴⁾:

Յ ա ռ ա ջ ա ղ ա ն .

Մենք կամենում ենք ազատել հայերին մի շատ հին անարդարութիւնից, հնազանդեցնել զոցա ամեն լանով մեր օրէնքներին և շնորհել հետեւեալ պատուաւոր հասարակութիւնը:

Դ Ղ Ո Ւ Ն I.

Նորերս տեղեկանալով որ հայոց մէջ գոյութիւն

²³⁾ Բէլիզարիոս և Ներսէս կայսր Յուստինիանոսի նշանաւոր զօրապետներն էին, որոնք հիւպատի պաշտօնով ևս ծառայել են կայսրութեան:

²⁴⁾ Ներկայ ամբողջ թարգմանութեանս ծրագրից դուրս լինելով, որպէս ղերեւ էլ ասացի, համեմատական ուսումնասիրութիւնը մեզ զբաղեցնող նիւթի՝ ցանկացող ընթերցողին կարող եմ մատնացուց անել պ. Շաշեանի գեղեցիկ խօսքերով ասելով, «քրիստոնէութեան XII դարի սկզբում շատ բարեփոխութեան և կատարելագործութեանը շատ մօտեցած հայկական « օրէնքներին » ժառանգութեանց վերաբերեալ հետեւեալ զուգանքերը՝ 1) Գլ. ԿԲ. Յաղագս դատաստանաց բաժանման ժառանգութեան արանց, 2) Գլ. ԿԳ. Յաղագս դատաստանաց բաժանման ժառանգութեան որոց որդիս և զստերս իցէ, 3) Գլ. ԿԴ. Յաղագս դատաստանաց ժառանգութեան կանանց բաժանման, 4) Գլ. ԿԵ. Յաղագս դատաստանաց բաժանողական արուեստից ընչից ի ժառանգութիւն և ալլն. (տես Հրատառտանագիրք Հայոց Միութեարալ Գոշլի» հրատ. հայր վահան Բաստամեանի. վաղարշապատ 1880, եր. 370):

ունի մի օտարօտի ու բարբարոս օրէնք,²⁵ անարժան թէ հռոմայեցիներին և թէ մէր կայսրութեան արդարադատութեան, այն է որ տղամարդիկն են միայն ժառանգում իրանց ծնողների ստացուածքները, բայց ոչ կանայք ևս՝ մենք ներկայիւս դիմում ենք ձերդ բարձրութեան, որ դուք սահմանէք ժառանգութիւնների՝ աւաստութիւն, և որ մէկ և միւս սեռին պատկանող հռոմայեցիների համար գործ դրուող օրէնքները, գործ դրուին նոյնպէս Հայաստանում։ Արդարեւ, եթէ մենք տուինք գոցա մեր օրէնքները, այն նպատակով էր որ դոքա կառավարուած լինին համաձայն մեր օրէնսդրութեան։

§ 1. Բայց որովհետեւ անպատեհ էր լինէր փոփո-

²⁵ Եթէ Յուստինիանոսը իրաւացի պատճառ ունէր պարտաւելու Հայաստանի նախնի սովորութիւնները (coutumes) — այսինքն իբր օրէնք գործ դրուող սովորութիւնները — մենք պէտք է ասենք, որ քրիստոնէութեան XII-րդ դարի սկզբում հայկական օրէնքները՝ արդէն շատ բարեկոխուած շնորհիւ հռչակաւոր օրէնսդիր (législateur) Մխիթար Գոշի, շատ մօտեցան կատարելագործութեան։ Ֆրանսիացի մի քանի մատենագիրներ՝ ի միջի աւուց եղ. Իւլիօրիէ և Վիկտօր Լանգլուա նշանաւոր հալագէտները, փշելով Մխիթար Գոշին, առաջ են բերում քաղուածներ նրանից. (Տես V. Langlois, le Trésor des Chartes d'Arménie, passim, notamment p. 37, Venise, typ. Armén. de Saint-Lazare, 1863)։ Փարիզի Ազգային Գրադարանի ձեռագրների բաժնում կարելի է տեսնել ընդ համարաւ 103 «Հայոց դատաստանագիրք» ձեռագիրը, որ կազմուած և խմբագրուած է հռչակաւոր վարդապետ Մխիթար Գոշի ձեռքով 1184 թուականին։ Այս ձեռագիրը ընդօրինակումն է այն բնագիր ձեռագրի, որ գտնուում է Վենետիկի Մխիթարեանց հայկական ձեռարանի գիւանում։ Լրացուցիչ տեղեկութիւններ ունենալու համար թագի ժառանգման, պատժականութեան և առհասարակ Հայաստանի օրէնքների ու սովորութիւնների (coutumes) մասին՝ մենք մատնացուց կ'անենք ընթերցողին այն լոգուածը, որ Journal Asiatique ամսագրի 1832 թ. 21 և հետեւեալ երեսներում տպուած է այս վերնագրով՝ «Մանրամասներ Հայոց հասարակաց իրաւունքների (droits publics) մասին, քաղած և ֆրանսերէն թարգմանած վրաց Վահրամանդ թագաւորի դատաստանադրքից Մ. Բրոսսէի ձեռքով» (Մանթ. Գ. Եաշեանի, տես նորա բնաբան-գրուածքներս 155.)

խել այն ամենը, ինչ որ կատարուած է մինչև այդ ժամանակ, մենք կարգադրեցինք որ այս օրէնքը սկսուի գործադրուի մեր թագաւորելու սկզբից: Այն ժառանգութիւնները, որ լոյս կը գան այս ժամանակից սկսած՝ կը ստացուին համաձայն նոր օրէնքի: Սակայն եթէ հաշտ համաձայնութիւններ այդ առթիւ արդէն կայացած են՝ թող մնան և պահպանուին նոյնութեամբ: Մենք ձեռնամուկ չենք լինիլ այն բանին, ինչ որ հաշտութեամբ վճուուած է մասնաւոր անձանց միջև՝ շփոթու վնաս ծագելուն առաջն առնելու համար:

§ 2. Արդ մենք կամենում ենք, որ վերոյիշեալ ժամանակից սկսած, կանայք ժառանգեն մինչև անգամ այն անշարժ ստացուածքները կամ գոյքերը, որ կոչոււմ են *genearchica* — այսինքն հայրենական ժառանգութիւններ: Եթէ կտակողներից ոմանք նշանակեն իբրև ժառանգուհիք իրանց աղջկանց, որոնք անկտակ (*ab intestat*) իրաւունք չէին ունենալ ժառանգելու՝ սոքա ևս — այսինքն աղջիկները հայրենական անշարժ գոյքերի իրանց մասը կարող են նոյնպէս աւանդել կամ տալ ի ժառանգութիւն:

Վերջաբան.

Մեր իմաստութեամբ հրամայուած այս օրէնքի կատարման ու պահպանման հոգսը թող ունենալ ձերդ գերազանցութիւնը, որովհետև պէտք է որ մեր իշխանութիւնը յարգուած լինի ամեն տեղ: Ներկայ օրէնքը որ գործադրելի է հէնց մեր թագաւորելու սկզբից, ինչպէս որ արդէն ասացինք, թող պահպանուի յաւիտեան մեր բոլոր կայսրութեան մէջ:

Արաբեալ օգոստոսի օրերի 10-ին Բէլիզաբիոսի հիւպատութիւնից յետոյ (535-ին): ²⁶⁾

Ն. ՅՍ ԲՈՅ

(Կը շարունակուի)

²⁶⁾ Թէև այս «Հրովարտակի» տարեթիւը (535) ցոյց է տալիս, որ մի տարի առաջ է դրուած նախընթաց «Նօվէլլալից» (536), ուստի և ժամանակագրական կարգով կարծեմ առաջ պիտի դասուէր, քանի որ չեմ ուզում փոփոխել պ. Դանշանի զրաժ կարգը և թարգմանում եմ ինչպէս որ այդ բերուած կալ նորա դրուած — թէլի մէջ: